

Նախագահի գրասենյակ

ՀՈՒՇԱԳԻՐ

Ամսաթիվ՝ 2020 թվականի մարտի 27

Բարի երեկո LACC-ի հիանալի ուսանողներ,

Հուսով եմ, որ դուք հիանալի գարնանային արձակուրդ անցկացրեցիք և պատրաստ եք երկուշաբթի օրվանից առցանց դասեր սկսելու : Աշխատակազմը, ֆակուլտետը և վարչակազմը միասին ջանասիրաբար աշխատել են, որպեսզի լավագույնս պատրաստվեն՝ երկուշաբթի օրվանից առցանց դասընթացները սկսելու համար: Որքան որ հնարավոր է փորձել ենք կանխատեսել, թե ինչի կարիք կունենան մեր դասախոսները, ուսանողներն ու աշխատակիցները, սակայն կլինեն մի շարք բաներ, որոնք մենք չենք կանխատեսել: Հուսով եմ, որ սա ձեզանից և ոչ մեկի համար լրացուցիչ սթրես և անհանգստություն չի առաջացնի: Ինչ էլ որ լինի, մենք միասին աշխատելու ենք հնարավորինս արագ լուծել դրանք: Մենք ունենք մարդկանց մի բանակ, ովքեր պատրաստ են օգնել:

Խնդրում ենք օգտագործել մեր «Թեժ գիծը»՝ ձեր կարիքների մասին մեզ տեղեկացնելու համար: Մենք վերահսկում ենք թեժ գիծը և արձագանքում դրանց:

Hotline-students@lacitycollege.edu

Մենք ամեն ինչին հետևելու ենք այս հանգստյան օրերին և հաջորդ շաբաթ ամբողջ շաբաթվա ընթացքում (ներառյալ երեքշաբթի օրը, որը Սիզր Չավեզ տոնն է):

ՀԻՇԵՔ՝ մենք միասնական ենք և մենք այստեղ ենք ձեզ օգնելու համար:

Հուսով եմ, որ դուք կկարողանաք հանգստանալ այս հանգստյան օրերին, նախքան երկուշաբթի օրը վերսկսել կոճակը սեղմելը: Եթե երկուշաբթի օրը ձեզ թվա թե ինչ որ բան անկազմակերպ է և դա ձեզ զայրացնում է, ուղղակի խորը շունչ քաշեք: Մենք բոլորս միասին աշխատելու ենք, որպեսզի դրա միջից դուրս գանք:

ՀԱՎԱՏԱ ՆՎԱՃԻՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍԻՐ Մենք կարող ենք դա անել!

Մաղթում եմ հանելի հանգստյան օրեր,